ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ՝ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՀԱՐՑԸ» ՀՈԴՎԱԾԻ ԱՌԹԻՎ

«Պատմաբանասիրական հանդես»-ի 2017 թ. առաջին համարում՝ «Քննարկումներ» խորագրի ներքո (էջ 199), լույս է ընծայվել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դասախոս, բ. գ. դ., պրոֆեսոր Վանո Եղիազարյանի «Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» պատվիրատուի հարցը» վերնագրով հոդվածը: Հեղինակը չի վարանում շեշտել, որ հոդվածի «գիտական նորույթը Դրասխանակերտցու Պատմության՝ մեկ թագավորի կողմից պատվիրված լինելու վարկածն է», ուստի նպատակադրվել է «պարզել իրական պատվիրատուի ինքնությունը»: Նա նաև հարկ է համարում նշել, որ այդ խնդրի լուծման համար «կիրառվել են փաստերի համադրման և վերլուծման, ինչպես նաև՝ պատմական ու պատմահամեմատական մեթոդներ»: Ի հաստատումն իր կարծիքի, բերում է մի քանի «կռվաններ»: Եղիազարյանի կարծիքով Գուրգեն Արծրունին (Գագիկի եղբայրը) չէր կարող պատվիրատու լինել, քանզի, Դրասխանակերտցու վկայությամբ, նա գնում է արաբ ոստիկանի մոտ՝ «իր անվարժ ու անփորձ մտքով համոզելու» նրան՝ փոխելու վերաբերմունքը: Պատմագրի այս խոսքերի վրա հենվելով՝ նա կարծում է, որ իր Գուրգենը «անվարժ ու անփորձ» մտքով հազիվ թե պատվիրատու լիներ: Ուստի, հոդվածագիրը գրում է՝ պատվիրատուն միայն Գագիկն է եղել: Սակայն իր դարի ոգին ճաշակած պատմագիրն այդ բառակապակցությամբ նկատի ունի դիվանագիտական գործընթացներում Գուրգենի անփորձությունը: Դրասխանակերտցին Վասպուրականում էր, որի տիրակալները շահագրգռված էին նրա երկասիրած գործի շարադրումն ըստ պատշաճի իր լրումին հասցնելու մեջ, ուստի կարող էին շտապեցնել նրան իբրև պատվիրատուներ և հովանավորներ:

Վ. Եղիազարյանը կարծում է, որ Դրասխանակերտցու Պատմության բնագրում սկզբնապես եղել է ոչ թե «ի հրամանէ թագավորաց», այլ՝ «ի հրամանէ թագավորի» արտահայտությունը: Ի հաստատում որի, նա նշում է՝ պատմագրի վկայությունը «մի նավապետի», այսինքն «մի պատվիրատուի» մասին է: Ուստի հոդվածագիրը գրում է, որ պատմության պատվիրատուն ոչ թե երկու, այլ մեկ թագավոր է եղել՝ անգիտանալով այն փաստը, որ «նավապետ» բառեզրի տակ պատմագիրն ի նկատի ունի ոչ թե Գագիկ Արծրունուն, այլ՝ Սուրբ Հո-

գուն: Նկատենք նաև, որ Մովսես Խորենացին չի ընդունում այն հին պատմագիրներին, ովքեր իրենց պատմությունները շարադրել են «Ս. Հոգուն հակառակ մտածողությամբ» (Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց, Տփղիս, 1913, էջ 13): Թովմա Արծրունին գրում է, որ «Մեծն Մովսեսը» ՝ եբրաեցիների մատենագիրը գրել է ներշնչվելով Արարչից: Պատմագիրը նաև նշում է, որ «Տերն ինձ ուղղություն ցույց կտա ՝ ճշմարտությամբ այս մատյանում գրելու պատմությունը ՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ և Քրիստոսի խորհուրդներով…» (Թովմա Արծրունի և Անանուն. Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985, էջ 10): Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Ներսես Շնորհալի կաթողիկոսը իմաստությամբ հռչակված էր ուրիշ ազգերի մեջ ՝ «հոգւով սրբով առլցեալ» (Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 118): Դրասխանակերտցին առավել ևս պետք է որ ծեր տարիքում ապավիներ Ս. Հոգու զորությանն ու իմաստությանը:

*Վ. Եղիազարյանի կարծիքով Գյուտ կաթողիկոսը 485 թ. կաթողիկոսանիստը տեղափոխել է Դվին: Սակայն վերջինս աթոռակալել է 461–478 թվերին: Ըստ անվավեր մի զրույցի, Վարդան Մամիկոնյան զորավարն ավերում է Դվինի կրակապաշտական մեհյանը և նրա տեղում հիմնում Սբ. Գրիգոր կաթողիկեն և Գյուտ կաթողիկոսին բերում այնտեղ: Այս մասին հաղորդում են Թովմա Արծրունին և Դրասխանակերտցին, մինչդեռ ո՛չ Եղիշեի և ո՛չ էլ Ղազար Փարպեցու մոտ նման տեղեկություն չկա: Վարդան զորավարը Գյուտի ժամանակակիցը չէր, զոհվել էր Ավարայրում նրա գահակալելուց տաս տարի առաջ: Գյուտի ժամանակակից Ղազար Փարպեցին գրում է, որ կաթողիկոսը լցված էր «զօրութեամբ Սուրբ Հոգվոյն» (*Ղազար Փարպեցի. *Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982, էջ 276): Պատմագիրը նաև նշում է, որ Գյուտը Սուրբ Հոգու ասած «ծածուկ բաները նույն Սուրբ Հոգու շնորհիվ հայտնի դարձնելով ՝ լուսավորապես սովորեցնում էր ամբողջ ժողովրդին» (նույն տեղում, էջ 266): Հայտնի է, որ Գյուտը, գահակալելով Վանանդի Ոթմտու գյուղում, վախճանվում և թաղվում է այնտեղ (մոտավորապես 478 թ.):*

Հոդվածում «Հայոց աշխարհ» եզրույթը սկսվում է փոքրատառով, մինչդեռ, իբրև հատուկ անուն, այն պետք է գրվի մեծատառով:

Ասվածից հետևում է, որ հարկ չկա շոշափել Դրասխանակերտցու երկասիրության պատվիրատուի հարցը և այն ներկայացնել նոր լուսաբանությամբ ՝ խճողելով պատմական փաստերը:

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ